

Արձանագրություն №4/2013-2014

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության
գիտական խորհրդի՝ 2014թ. հունվարի 30-ին տեղի ունեցած թիվ 4 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 66-ը (վաթսունվեց):
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի
առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. **Հաղորդում ԵՊՀ ռեկտորի՝ Արիզոնա կատարած այցի ընթացքի և արդյունքների մասին.** զեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան:
2. **ԵՊՀ գիտական խորհրդին կից <<Հայերենի լեզվավիճակի ուսումնասիրման և զարգացման ուղիների մշակման ժամանակավոր հանձնաժողով>> ստեղծելու մասին.** զեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան:
3. **Հաղորդում ԵՊՀ հավատարմագրման փորձագիտական զեկույցի մասին.** զեկ.՝ պրոռեկտոր Ա.Կ. Գրիգորյան
4. **ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.** զեկ.՝ որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա. Ս. Բուդաղյան:
5. **ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.** զեկ.՝ որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա. Ս. Բուդաղյան:
6. **Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների 2012-13 ուստարվա արդյունքների մասին.** զեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ.Գ. Ժամհարյան
7. **ԵՊՀ ՈԻԳԸ 2012-13 ուստարվա գործունեության մասին.** զեկ.՝ ՈԻԳԸ նախագահ Ս. Մալխասյան
8. **Ընթացիկ հարցեր**
 1. **Պատմության ֆակուլտետի կանոնադրությունում լրացում կատարելու մասին**
 2. **ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հոդվածների ժողովածուն /հասարակական գիտություններ/ հրատարակության երաշխավորելու մասին:**
 3. **Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիայի <<Armenian Folia Anglistika>> միջազգային գիտական հանդեսը հրատարակության երաշխավորելու մասին:**

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և
մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.- Հաղորդում ԵՊՀ ռեկտորի՝ Արիզոնա կատարած այցի ընթացքի և արդյունքների մասին:** Ա. Սիմոնյանն իր՝ Արիզոնա կատարած այցի վերաբերյալ հաղորդման մեջ առանձնացրեց Արիզոնայի պետական/նահանգային/համալսարան կատարած այցը: Առանձնակի ուշադրության արժանացրեց նշված համալսարանի ֆինանսական հոսքերի պլանավորման գործընթացը՝ եզրակացնելով, որ այն մեր համալսարանի բյուջետավորման գործընթացի հետ բավական նմանություններ ունի: Ա. Սիմոնյանը ներկայացրեց եկամուտների և ծախսերի կառուցվածքը՝ ընդգծելով վերջին շրջանում պետական ֆինանսավորման նվազման մասին ընդհանուր միտումը:

Որոշեցին.-

1. ԵՊՀ ռեկտորի՝ Արիզոնա կատարած այցի ընթացքի և արդյունքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. **Լսեցին. - ԵՊՀ գիտական խորհրդին կից <<Հայերենի լեզվավիճակի ուսումնասիրման և զարգացման ուղիների մշակման ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին:** Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանն իր ելույթում նշեց, որ հայերենի լեզվավիճակի հարցն անտարակույս մտահոգիչ է, և այս հարցում Երևանի պետական համալսարանը լուրջ անելիքներ ունի, ինչպես և ներուժ՝ իրավիճակի շտկմանը նպաստելու հարցում: Կարևորելով այս առնչությամբ առկա խնդիրների վերհանումը, ըստ ոլորտների պատասխանատու անձանց նշանակումը և կարգավորման ուղիների վերաբերյալ առաջարկություններ հանդես բերելը՝ Ա. Սիմոնյանն առաջարկեց ստեղծել գիտխորհրդին կից ժամանակավոր հանձնաժողով: Քննարկման ընթացքում նիստի մասնակիցները առաջարկեցին հանձնաժողովի կազմը:

Որոշեցին. -

1. Ստեղծել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդին կից <<Հայերենի լեզվավիճակի ուսումնասիրման և զարգացման ուղիների մշակման ժամանակավոր հանձնաժողով>>՝ հետևյալ կազմով.

1. Ավետիսյան Յուրի Սրապիոնի (նախագահ) – Հայոց լեզվի ամբիոնի վարիչ
 2. Սողոմոնյան Մենուա Անդրանիկի (քարտուղար) – ԵՊՀ գիտական քարտուղար
 3. Ավագյան Արծրուն Աբգարի – Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան
 4. Գասպարյան Սեդա Քերոբի – Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ
 5. Թեյլան Լեոնիդ Գուրգենի – Հայոց լեզվի ամբիոնի դոցենտ
 6. Հովսեփյան Լիանա Սամվելի – Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի պրոֆեսոր
 7. Մալխասյան Միքայել Արմենի – ԵՊՀ ՌԻԳԸ նախագահ
 8. Մարտիրոսյան Նադաշ Նարինեկի – Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան
 9. Միրզոյան Հրաչիկ Ղազարի - <<Բանբեր Երևանի Համալսարանի>> հանդեսի գլխավոր խմբագիր
 10. Մուրադյան Սամվել Պարզևի – Հայ գրականության ամբիոնի վարիչ
 11. Պետրոսյան Վարդան Զորիկի – Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ
 12. Մաքապետոյան Ռուբեն Կարապետի – Հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

3. **Լսեցին. Հաղորդում ԵՊՀ հավատարմագրման փորձագիտական զեկույցի մասին:** Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը նշեց, որ ԵՊՀ-ն գտնվում է հավատարմագրման այն փուլում, երբ, ինքնագնահատման զեկույցի վերաբերյալ փորձագետների ներկայացրած երաշխավորությունների հիման վրա անհրաժեշտ է կազմել բարելավման միջոցառումների ժամանակացույց՝ նշելով հիմնահարցի արդի վիճակը, պլանավորվող անելիքները, ժամկետները, պատասխանատուները, պահանջվող ռեսուրսները և կատարողականի ցուցիչները: Ա. Գրիգորյանը նշեց, որ համապատասխան աշխատանքային խմբերը մշակել են բարելավման միջոցառումների ժամանակացույցը, որը ներկայացվում է գիտական խորհրդի հաստատմանը:

Որոշեցին. –

1. Հաստատել ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական գնահատման երաշխավորությունների իրականացման գործողությունների ծրագիրը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

4. **Լսեցին. – ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման և մոնիթորինգի կարգերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:** ԵՊՀ ՈԱԿ տնօրեն Ա. Բուդաղյանն ասաց, որ նշված կարգերն ընդունելուց (2011թ.) ի վեր տեղի են ունեցել մի շարք գործընթացներ (մասնավորապես՝ ստեղծվել է ԵՊՀ որակի ապահովման կենտրոնը, ԵՊՀ և ֆակուլտետային գիտխորհուրդների՝ ՈԱ հանձնաժողովները, տեղի է ունեցել ԵՊՀ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացը), որոնց բազում ասպեկտներ պետք է արտացոլվեն նշված կարգերում, որոնցում արված փոփոխություններն ու լրացումները, նոր խմբագրության տեսքով ներկայացվում է գիտխորհրդի հաստատմանը (Ա. Բուդաղյանը նշեց նաև մի քանի այլ փոփոխություններ, օրինակ՝ վերանայման ժամկետի երկարացումը 1-ից 2 տարի և այլն):

Որոշեցին. –

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի կրթական ծրագրերի հաստատման կարգը (նոր խմբագրությամբ):
2. Հաստատել Երևանի պետական համալսարանի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը (նոր խմբագրությամբ):
3. Որոշումներն ուժի մեջ են մտնում ընդունման պահից:

5. **Լսեցին. – Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների 2012-13 ուստարվա արդյունքների մասին:** Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյանը ներկայացրեց 2012-13 ուստարվա ուսանողական հարցումներին ուսանողների մասնակցությունն ըստ ֆակուլտետների, հարցման ընդհանուր արդյունքները, դեկանատների աշխատակիցների գնահատման արդյունքները, հարցման տեղեկատվական հատվածի հարցերն ու դրանց արդյունքները:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, քիմիայի ֆակուլտետի դեկան Տ. Ղոչիկյանը:

Որոշեցին. – Ընդունել ի գիտություն:

6. **Լսեցին.** - **ԵՊՀ ՈՒԳԸ 2012-13 ուստարվա գործունեության մասին:**
Մ.Մալխասյանը ներկայացրեց ՈւԳԸ կառուցվածքը, կազմակերպված միջոցառումները, ուսանողների և ասպիրանտների հաջողությունները հանրապետական և միջազգային ծրարգերում, մասնակցությունը գիտաժողովներին ու համաժողովներին, հրատարակված գիտական աշխատանքները:

Արտահայտվեցին. – Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը, պրոռեկտոր Գ. Գևորգյանը, պրոռեկտոր Ռ. Մարկոսյանը:

Որոշեցին. -

1. Ընդունելի գիտություն:

7. **Լսեցին.** – **Ընթացիկ հարցեր:**

1/ պատմության ֆակուլտետի կանոնադրությունում լրացում կատարելու մասին: Գիտքարտուղար Մ. Սողոմոնյանը նշեց, որ, կապված սփյուռքագիտության ամբիոնի՝ Հայ բանասիրության ֆակուլտետից պատմության ֆակուլտետ տեղափոխվելու հետ անհրաժեշտություն է առաջացել պատմության ֆակուլտետի կանոնադրության հավելվածում ավելացնել սփյուռքագիտության ամբիոնը՝ որպես կառուցվածքային ստորաբաժանում:

Որոշեցին. –

1. Պատմության ֆակուլտետի կանոնադրությունում կատարել համապատասխան փոփոխությունը՝ հավելվածում ավելացնելով սփյուռքագիտության ամբիոնը:

2/ Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիայի <<Armenian Folia Anglistika>> միջազգային գիտական հանդեսը **թեկնածուական և դոկտորական** ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկելու համար երաշխավորելու մասին:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը, Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Ս. Ք. Գասպարյանը:

Ս. Ք. Գասպարյանն իր ելույթում նշեց, որ հանդեսի հեղինակության մասին է վկայում այն հանգամանքը, որ այն հրատարակող՝ Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիան հանդիսանում է Եվրոպական ֆեդերացիայի անդամ: Հանդեսը միջազգային է, որի կազմման ու խմբագրման գործընթացում ներգրավված են ԵՊՀ-ն, Երևանի պետական լեզվաբանական համալսարանը, Մոսկվայի պետական համալսարանը, Կրակովի Յագելոնյան Համալսարանը, Սարագոսայի և Չերնոգորիայի համալսարանները:

Որոշեցին. - **Երաշխավորել Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիայի <<Armenian Folia Anglistika>> միջազգային գիտական հանդեսը՝ ընդգրկելու թեկնածուական և դոկտորական** ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

05.02.2014թ.